ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 2
Հեռախոս (0286)4-34-23

Թիվ 94
21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան,

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 17-ը նոյեմբերի 2016 թվականի N24-Ա, N25-Ն, N26-Ա, N27-Ա, N28-Ա, N29-Ա, N30-Ա,N31-Ա, N32-Ա, N33-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Կատ՝ Լ. Մեժլումյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՍՏԻՑ No 9708
«25» 11 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2016 թվական N24 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 17-ի N3 արտահերթ նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի պատվավոր կոչումների և պարգևների մասին:

2.Մեղրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին:

3. «Սյունիքի մարզի Կարճևանի մանկապարտեզ» հիմնարկը լուծարելու մասին:

4. «Սյունիքի մարզի Լեհվազի մանկապարտեզ» հիմնարկը լուծարելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության արոտավայրերի հողերից, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար, հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք /սերվիտուտ/ տրամադրմանը համաձայնություն տալու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք գյուղի Զվար տեղամասից սեփականության իրավունքով հողամաս ձեռք բերելու մասին:

7. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր, Ալվանք, Նռնաձոր և Վահրավար բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությունները քննարկելու մասին և ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N23-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

8.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վահրավար, Լիճք և Կարճևան

բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությունները քննարկելու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, ջրային նպատակային նշանակության հողերից էներգետիկ օբյեկտի /ջրընդունիչ/ կառուցման նպատակով, կառուցապատման իրավունքով, առանց մրցույթի, հողամասի տրամադրմանը համաձայնություն տալու մասին:

Կողմ (10)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՉԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Դեմ(0)

Ձեռնպահ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2016թ. նոյեմբերի 17

ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2016 թվական N25 –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Սահմանել «Մեղրի համայնքի պատվավոր կոչումները և պարգևները» համաձայն N1 հավելվածի:
2.Հաստատել.
1)«Մեղրիի պատվավոր քաղաքացի» վկայականի ձևը՝ համաձայն N2 հավելվածի,
2) Մեղրի համայնքի ղեկավարի պատվոգրի ձևը՝ համաձայն N3 հավելվածի,
3) Մեղրի համայնքի ղեկավարի շնորհակալագրի ձևը՝ համաձայն N4 հավելվածի:

Կողմ (10)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ	ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ	ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ	ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ	ԽԱՉԱՏՈՒՐ		
ՋԱՔԱՐՅԱՆ	ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ	ԳԱՐԵԳԻՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՀԱՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԿՈՆՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ	ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. նոյեմբերի 17
ք. Մեղրի

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 17-ի N25-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով կարգավորվում են Մեղրի համայնքի պատվավոր կոչումներ և պարգևներ շնորհելու հարաբերությունները:

2.Մեղրի համայնքի պատվավոր կոչումները և պարգևները նպատակ ունեն բարձր գնահատականի և խրախուսանքի արժանացնել անձանց և կազմակերպություններին՝ Մեղրի համայնքի հանրության առջև ունեցած առանձնահատուկ ծառայությունների, Մեղրի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ու բարօրությանն ուղղված նշանակալի ներդրումների, գիտության, առողջապահության, կրթության, արվեստի, գրականության, սպորտի և մի շարք այլ բնագավառներում ունեցած ակնառու հաջողությունների, ինչպես նաև հասարակական, քաղաքական, բարեգործական արդյունավետ գործունեության համար:

3.Մեղրի համայնքի պատվավոր կոչումներ և պարգևներ շնորհվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա պետությունների քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց /այսուհետ՝ քաղաքացիներ/, ինչպես նաև կազմակերպություններին, ստեղծագործական և աշխատանքային կոլեկտիվներին:

4.Մեղրի համայնքի պատվավոր կոչումներ և պարգևներ շնորհելու հիմնական սկզբունքներն են՝

1)պատվավոր կոչումների և պարգևների ներկայացվողներին առաջադրվող պահանջների ու պայմանների հավասարությունը և անկողմնակալությունը.

2) գործընթացի հրապարակայնությունը և թափանցիկությունը.

3)պատվավոր կոչումներ և պարգևներ շնորհելու իրավասությունների հստակ սահմանազատումը Մեղրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների՝ Մեղրի համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջև:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

5. Մեղրի համայնքի պարգևներն են՝

1) Մեղրի համայնքի ղեկավարի պատվոգիր,

2) Մեղրի համայնքի ղեկավարի շնորհակալագիր:

6.Մեղրի համայնքի ղեկավարի պատվոգրով անձինք /կազմակերպությունները, ստեղծագործական կամ աշխատանքային կոլեկտիվները/ պարգևատրվում են Մեղրի համայնքի զարգացման գործում մեծ ներդրումների և Մեղրիի հանրությանը մատուցած ծառայությունների համար:

7.Մեղրի համայնքի ղեկավարի պատվոգրի գեղարվեստական ձևավորման տարրերը ստվարաթղթի վրա գունավոր են, իսկ գրությունները՝ սև, կատարված ուղղահայաց (գրքային) տարբերակով:

8.Պատվոգրի վերևի մասի կենտրոնում զետեղված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, ավելի ներքև ձևավոր շրջանակում «Մեղրի համայնքի ղեկավարի» գրությունն է՝ մեկ տողով, որի ներքևում՝ «ՊԱՏՎՈԳԻՐ» գրությունն է: Պատվոգրի կենտրոնում նշվում է

պարգևատրվածի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը /կազմակերպության, հիմնարկի անվանումը/ և հակիրճ հիմնավորվում է պարգևատրվելու հանգամանքը:Տեքստից ներքև մեկ տողի վրա գրություններ են՝ «Մեղրի համայնքի ղեկավար», համայնքի ղեկավարի անունը, ազգանունը, ինչպես նաև ստորագրությունն ու կնիքը:

9.Պատվոգրի շրջանակի ստորին ձախ մասում նշվում է պատվոգրի տրման ամսաթիվը:

10.Մեղրի համայնքի ղեկավարի պատվոգրով պարգևատրելու որոշումը կայացնում է Մեղրի համայնքի ղեկավարը և այն պարգևատրված անձին է հանձնում հանդիսավոր պայմաններում:

11. Մեղրի համայնքի ղեկավարի շնորհակալագրով պարգևատրվում են Մեղրի համայնքի հանրության առջև վաստակ ունեցող քաղաքացիները /կազմակերպությունները, ստեղծագործական կամ աշխատանքային կոլեկտիվները/՝ տնտեսական, գիտահետազոտական, սոցիալ-տնտեսական, հասարակական և բարեգործական գործունեության համար:

12. Մեղրի համայնքի ղեկավարի շնորհակալագրի գեղարվեստական ձևավորման տարրերը ստվարաթղթի վրա գունավոր են, իսկ գրությունները՝ սև, կապարված ուղղահայաց (գրքային) տարբերակով:

13.Շնորհակալագրի վերևի մասի կենտրոնում զետեղված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, ավելի ներքև ձևավոր շրջանակում «Մեղրի համայնքի ղեկավարի» գրությունն է՝ մեկ տողով, ավելի ցածր՝ «ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ» գրությունն է: Շնորհակալագրի կենտրոնում նշվում է պարգևատրվածի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը /կազմակերպության, հիմնարկի անվանումը/ և հակիրճ հիմնավորվում է պարգևատրվելու հանգամանքը: Տեքստից ներքև մեկ տողի վրա գրություններ են՝ «Մեղրի համայնքի ղեկավար», համայնքի ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունն ու կնիքը:

14.Շնորհակալագրի շրջանակի ստորին ձախ մասում նշվում է շնորհակալագրի տրման ամսաթիվը:

15.Մեղրի համայնքի ղեկավարի շնորհակալագրով պարգևատրելու որոշումը կայացնում է Մեղրի համայնքի ղեկավարը և այն պարգևատրված անձին է հանձնում հանդիսավոր պայմաններում:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ

16. Մեղրի համայնքի պատվավոր կոչումն է՝

Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացի,

17.«Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացի» կոչումը շնորհվում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների քաղաքացիներին քաղաքի զարգացման գործում նշանակալի ավանդ ունենալու համար՝ քաղաքի բարօրությանը, բարգավաճմանը միտված անձնական գործունեությունը խրախուսելու նպատակով:

18.« Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացի» կոչումը շնորհելու հիմքերն են՝

1) բացառիկ մեծ վաստակը Մեղրի համայնքի բարգավաճման գործում,

2) քաղաքացու հեղինակությունը Մեղրի համայնքի բնակչության շրջանում, որը ձեռք է բերվել Հայաստանի Հանրապետության և Մեղրի համայնքի համար նշանակալի գործունեությամբ,

19.Օտարերկրյա պետությունների քաղաքացիներին «Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացի» կոչումը շնորհվում է նաև այլ հիմքերով, այդ թվում՝ այս կոչումը շնորհելուց բխող հասարակական-քաղաքական հնչեղությամբ:

20.«Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացի» կոչմանն արժանացած անհատին շնորհվում է «Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացու» վկայական և շնորհագիր:

21.«Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու վերաբերյալ որոշումը ընդունում է Մեղրի համայնքի ավագանին՝ Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, անհատապես, ցմահ, և այդ կոչումը ետ վերցնելու ենթակա չէ:

22. Մեղրի համայնքի ղեկավարը ստորագրում է Պատվավոր քաղաքացու վկայականը:

23.« Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացու» վկայականն ու շնորհագիրը այդ կոչմանն արժանացած քաղաքացուն հանձնում է Մեղրի համայնքի ղեկավարը՝ հանդիսավոր պայմաններում:

24.Պատվավոր քաղաքացիների անունները ժամանակագրական կարգով գրանցվում են Մեղրի համայնքի Պատվավոր քաղաքացիների մատյանում:

25.Մեղրի համայնքի Պատվավոր քաղաքացիների մատյանը մշտապես պահպանվում է Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմում:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

26.Պարգևատրված անձի մահվան դեպքում պարգևները և դրանց վկայագրերը կարող են որպես հիշատակ պահվել նրա ժառանգների մոտ կամ վերջիններիս համաձայնությամբ և Մեղրի համայնքի ղեկավարի գիտությամբ հանձնվել Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ:

27.Եթե պարգևատրված անձը չունի ժառանգներ, նրա մահվանից հետո պարգևները և դրանց վկայագրերը վերադարձվում են Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ:

28.Մեղրի համայնքի պարգևներով պարգևատրված քաղաքացիները, դրանց վկայագրերը կորցնելու դեպքում պահպանում են իրենց իրավունքները:

29.Պարգևների կրկնօրինակներ տրվում են համաձայն պարգևատրված անձի դիմումի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 17-ի N25 -Ն որոշման

ՁԵՎ
«ՄԵՂՐԻԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ N Անուն, ազգանուն ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ Շնորհված է Մեղրի համայնքի ավագանու ----------թ. հ. -Ն որոշմամբ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ---------- Անուն, ազգանուն Ստորագրություն, կնիք	MEGHRI MUNICIPALITY CERTIFICATE N Name, surname HONOURABLE CITIZEN OF MEGHRI AWORDED BY THE DECISION OF THE COUNCIL OF THE ELDERS OF MEGHRI ---------- N-N MAYOR ---------- Name, surname

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 17-ի N25-Ն որոշման

ՁԵՎ

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՏՎՈԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Պ Ա Տ Վ Ո Գ Ի Ր

Պաշտոնը

Անուն, ազգանուն, հայրանուն

Պարգևատրելու հանգամանքը

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ---------- ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ
Ստորագրություն, կնիք

«----» ---------- ----------
Ամիս ամսաթիվ տարեթիվ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 17-ի N25 -Ն որոշման

ՁԵՎ

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ա Գ Ի Ր

Պաշտոնը

Անուն, ազգանուն, հայրանուն

Պարգևատրելու հանգամանքը

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ---------- ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ
Ստորագրություն, կնիք

«----» ---------- ----------
Ամիս ամսաթիվ տարեթիվ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2016 թվական N26 - Ա

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N164-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10 դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Ստեղծել Մեղրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:
2.Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (10)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Մ. ՋԱՔԱՐՅԱՆ*

2016թ. նոյեմբերի 17
ք. Մեղրի

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 17-ի N26-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Սարգսյան Սյուզան- «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,
2.Մելքումյան Նելլի - Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,
3.Սարգսյան Սիրուն - Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,
4.Կարապետյան Պավլիկ – Մեղրիի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ
5.Համբարձումյան Նունե - Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,
6.Քրիստափորյան Աննա – Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,
7.Բաղդասարյան Թինա- Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,
8. Խաչատրյան Նվարդ- «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ

Սահմանել՝ հանձնաժողովի նախագահ՝ Նունե Համբարձումյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2016 թվական N27 - Ա

«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՃԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԻՄՆԱՐԿԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, առաջնորվելով հիմնարկի կանոնադրությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Լուծարել «Սյունիքի մարզի Կարճևանի մանկապարտեզ» հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ)՝ առանց իրավահաջորդի:
2.Հիմնարկի տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ հիմնարկը հաշվառումից հանելու համար:
3.Լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռին:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. նոյեմբերի 17
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2016 թվական N28 - Ա

«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՀՎԱԶԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԻՄՆԱՐԿԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, առաջնորվելով հիմնարկի կանոնադրությամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Լուծարել «Սյունիքի մարզի Լեհվազի մանկապարտեզ» հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ)՝ առանց իրավահաջորդի:

2.Հիմնարկի տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ հիմնարկը հաշվառումից հանելու համար:

3.Լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռին:

Կողմ (10)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ	ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ	ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ	ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ	ԽԱՉԱՏՈՒՐ		
ՋԱՔԱՐՅԱՆ	ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ	ԳԱՐԵԳԻՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՀԱՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԿՈՆՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ	ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. նոյեմբերի 17
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2016 թվական N29 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի դրույթներով, «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշման 76-րդ կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման,վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին N16-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2016 թվականի ապրիլի 2-ին տրված «Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության» ԵՀԹ-29/219 թույլտվությունը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերի հողերից 33.7135հա հողամաս, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար, հողամասից սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/, երկու տարի չորս ամիս ժամկետով, տրամադրելու «ՆԱՐԻՊՐՈՖ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սահմանելով տարեկան 504000 (հինգ հարյուր չորս հազար) ՀՀ դրամ վճար:

2.Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետին:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. նոյեմբերի 17
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2016 թվական N30 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԳՅՈՒՂԻ ԶՎԱՐ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, 46-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք գյուղի Զվար տեղամասից մեկ քառակուսի մետրը 800 (ութ հարյուր) դրամ արժեքով սեփականության իրավունքով ձեռք բերելու ֆիզիկական անձանց (Եվգենյա Աթայան ն/ք 0068435105, տրված 09.03.2016թ 045-ի կողմից, Վարուժան Հայրապետյան անձ. N AM0506131 տրված 08.11.20112 045-ի կողմից, Մինաս Հայրապետյան անձ. N AF0731766 տրված 17.09.2003թ 045-ի կողմից) սեփականություն հանդիսացող 0.118հա գյուղատնտեսական վարելահող նշանակության (կադաստրային ծածկագիր 09-039-0532-0010) հողամասը:

2.Համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ և ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

Կողմ (10)		*Դեմ(0)*	*Ձեռնպահ(0)*
ԱԴԱՄՅԱՆ	*ԱՇՈՏ*		
ԱԴԱՄՅԱՆ	*ԿԱՐԵՆ*		
ԱԴԱՄՅԱՆ	*ՀԱՐՈՒԹՅՈՒՆ*		
ԳԵՎՈՐԳՅԱՆ	*ԳԱԳԻԿ*		
ԳԵՎՈՐԳՅԱՆ	*ԽԱՉԱՏՈՒՐ*		
ԶԱՔԱՐՅԱՆ	*ՀՐԱՅՐ*		
ՀԱԿՈԲՅԱՆ	*ԳԱՐԵԳԻՆ*		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	*ՀԱՐՈՒԹ*		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	*ԿՈՆՍՏԱՆՏ*		
ՄԻՔԱԵԼՅԱՆ	*ՍԱՄՎԵԼ*		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. նոյեմբերի 17
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2016 թվական N31 - Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՎԱՆԻՁՈՐ, ԱԼՎԱՆՔ, ՆՌՆԱՁՈՐ ԵՎ ՎԱՀՐԱՎԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N23-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, 75-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 18-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1918-Ն որոշման, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է.

1.Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր, Ալվանք, Նռնաձոր և Վահրավար բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխություններին, ըստ որի առաջարկվում է Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող.

1)Պետական սեփականություն հանդիսացող հատուկ պահպանվող տարածքների /Արևիկ ազգային պարկ/ հողերից 0.05 հա /2 միավոր/ բնապահպանական հողամաս՝ /09-088-0101-0042-ից, 09-074-0434-0002-ից/.

2)Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.2 հա /11 միավոր/, որից 0,03հա արոտավայր /09-074-0407-0001-ից 2 միավոր/ և 0,17հա այլ հողատեսք /09-074-0426-0070,09-074-0426-0001-ից, 09-074-0443-0039,09-009-0101-0001-ից, 09-009-0135-0002-ից, 09-009-0137-0003, 09-066-0123-0001-ից, 09-066-0112-0001-ից, 09-066-0139-0001-ից/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կապի օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ՝ բջջային կապի կայանների շահագործման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

3.Չեղյալ ճանաչել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր բնակավայրի սեփականություն համարվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին» N23-Ա որոշումը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. նոյեմբերի 17
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2016 թվական N32 - Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀՐԱՎԱՐ, ԼԻՃՔ ԵՎ ԿԱՐՃԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 18-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1918-Ն որոշման, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է.

1.Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վահրավար, Լիճք և Կարճևան գյուղերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխություններին, ըստ որի առաջարկվում է Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող.

1)Պետական սեփականություն հանդիսացող հատուկ պահպանվող տարածքների /Արևիկ ազգային պարկ/ հողերից 0.13305 հեկտար /3 միավոր/ բնապահպանական հողամասեր՝ /09-088-0671-0001-ից 0.05106հա, 09-088-0686-0001-ից 0.04036հա, 09-039-0653-0001-ից 0,04163 հա/.

2)Համայնքային սեփականություն հանդիսացող ջրային հողերից 0.53726 հեկտար /09-051-0401-0001-11-ից/ և գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 1.51668 հեկտար /09-051-0401-0001-ից/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սեփականությունը հանդիսացող ենթակառուցվածքների շահագործման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՉԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2016թ. նոյեմբերի 17
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

17 նոյեմբերի 2016 թվական N33 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՋՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՕԲՅԵԿՏԻ /ՋՐԸՆԴՈՒՆԻՉ/ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ, ՀՈՂԱՄԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ հողային օրենսգրքի 48[1], 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշման IV.I բաժնի, 46.2 կետի դ) ենթակետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N16-Ն որոշման և պետական լիազոր մարմնի կողմից 09.10.2015թ. «ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված թիվ 000331 ջրօգտագործման թույլտվության, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-10, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ գյուղի 4-րդ փողոցի 9 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, ջրային նպատակային նշանակության հողերից/կադաստրային ծածկագիր 09-037-0543-0001-ից/՝ 0.03411 հա հողամաս էներգետիկ օբյեկտի /հէկ-ի ջրընդունիչ/ կառուցման նպատակով, կառուցապատման իրավունքով,առանց մրցույթի 20 /քսան/ տարի ժամկետով, տրամադրելու «ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սահմանելով տարեկան 341000 (երեք հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ վճար:

2.Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետին:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. նոյեմբերի 17
ք. Մեղրի